

## Գիտության ներկա և հեռանկարային ծրագրերը

Իսկական գիտնականի համար աշխատավարձը կարելուք, բայց ոչ հիմնական պայմանն է

Տարին մրցույթներին է գիտության ոլորտում հայտարարվել և շարունակելու են հայտարարվել մի շարք մրցույթներ: Հեռանկարային ծրագրերում նախատեսված են բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրման, երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության և մի քանի այլ մրցույթներ: Նաև նախատեսվում է ստեղծել աշխատանքային խումբ, որը կմշակի ՀՀ—ում տեխնոլոգիական հետազոտական համալսարանի ստեղծման ծրագիրը: Դրա իրականացումը նախատեսվում է սկսել 2014 թվականից:

Բայց մինչ այդ ամեն իրականություն դարձնելը, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը հայտարարեց, որ անցած տարին հաջող էր: Արդեն ամփոփվել է «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր—2012» մրցույթը: Մրցույթի արդյունքում դրամաշնորհներ են հանձնվել 25 ասպիրանտի: Հայտնի են նաև հայ—գերմանական համատեղ մրցույթի տվյալները. ֆինանսավորման է երաշխավորվել 10 հայտ: Իսկ հայ—ռուսական համատեղ մրցույթի վերջնական արդյունքները կհայտարարվեն ռուսական կողմի հետ համապատասխանեցվելուց հետո:

Մրցույթների առավելությունը Ս. Հարությունյանը համարում է արտասահմանցի խորհրդատուներին առաջին անգամ ընդգրկելու հանգամանքը. «Նրանց ներգրավումը գիտական ծրագրում էապես նպաստում է գիտության ոլորտում եվրախնտեզման գործընթացին»:

Մեկ այլ նորարարության՝ առցանց համակարգի ներդրումն էլ մրցութային գործընթացում հնարավորություն է տալիս բացառելու ցանկացած միջամտություն՝ վերացնելով ավելորդ թղթաբանությունը: Այդպիսով գործընթացը դառնում է առավել դյուրին՝ մոտենալով միջազգայնորեն ընդունված և կիրառելի տարբերակին:

Գիտության ոլորտի աշխատանքները շարունակվում են նաև իրավական դաշտում: ԳՊԿ նախագահը ընդգծեց, որ Ազգային ժողովում քննարկման փուլում է «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: ՀՀ կառավարություն էլ ներկայացվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Դրանով սահմանվելու են նոր հասկացություններ, ինչպիսիք են հետազոտական համալսարան, ազգային գիտական լաբորատորիա: Ֆինանսավորման ձևերը համապատասխանեցվելու են գիտության և տեխնիկայի զարգացման արդի չափանիշներին: Նաև հստակեցվելու է լիազոր մարմնի իրավասությունների շրջանակը:

«Ավարտին է մոտենում «Քենդլ» նախագծի առաջին փուլը: Ինչպես խոստացել ենք, ամենաուշը մայիսի վերջին այն կհանձնվի շահագործման»,—հիշեցրեց գիտպետկոմի նախագահը՝ շեշտելով, որ կառավարություն է ներկայացվել նաև ոլորտի երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը: Ուղեղների արտահոսքի խնդիրն էլ, Հարությունյանի խոսքերով, գլոբալ է: Նա վստահեցնում է, որ Հայաստանում լուրջ խնդիր ունենք ոչ թե երիտասարդների, այլ միջին սերնդի շրջանում. «40—45 տարեկանների տիրույթում խնդիրներն ավելի մեծ են: Ուղեղների «արտահոսք» ասվածն ավելի շատ վերաբերում է տարիքային այս խմբին»:

Գիտության ոլորտում ուղեղների շարժը Սամվել Հարությունյանը ողջունելի է համարում: Բայց այլ հարց է համարում գնալուց հետո վերադառնալը:

Ըստ ԳՊԿ ղեկավարի՝ այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում: Գիտնականների՝ դեպի դուրս շարժի հիմնական պատճառը նա համարում է սոցիալական խնդիրները: Նա արտահոսքի վերացումը պետության խնդիր է համարում: Իսկ որպես դրա կանխման ուղղությամբ առաջին քայլ մատնանշում է արտասահմանցի կոնսուլտանտների ինստիտուտը՝ Հայաստանում: Նա չի բացառում, որ ծրագրում ընդգրկված 70 կոնսուլտանտները մնան Հայաստանում աշխատելու:

Իսկ թե մենք ինչ պայմաններ կարող ենք առաջարկել դրսի գիտնականներին, որոնց չեն հարմարվում մեր՝ դուրս գնացող գիտնականները, Ս. Հարությունյանը պատասխանեց, որ գիտությամբ լուրջ զբաղվելու գլխավոր նախապայմանը որակյալ մարդկային ռեսուրսն է. «Փառք Աստծո, Հայաստանը դա ունի: Չեմ ասում, որ առանց սարքավորումների հնարավոր է գիտությամբ զբաղվել. պետք է դրանք էլ ապահովել»: Բայց միեւնույն ժամանակ նա հորդորում է հաշվի առնել, որ աշխարհը զարգանում է, եւ այսօր Երեւանում «նստած» մեկ այլ երկրում հնարավոր է դիտումներ կատարել:

«Իսկական գիտնականի համար աշխատավարձը կարելուք նշանակություն ունի, բայց ոչ հիմնական»: Գիտության պետական կոմիտեի նախագահը ուղեղների արտահոսքին զուգահեռ լուրջ խնդիր է համարում նաեւ կեղծ գիտնականների հարցը: Դրան միտված՝ մրցույթի պայմանները բավականին խստացվել են: Ակնկալվում է, որ ինչ—ինչ պայմաններում համապատասխան գիտական աստիճան ստացած մարդիկ խստացման շնորհիվ չեն կարող մասնակցել մրցույթներին:

**Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ**

21-03-2013

Սամվել Հարությունյան. «Ցանկացած գիտնական աշխատում է մի սկզբունքով՝ որտեղ հաց՝ էնտեղ կաց»



Այսօր ՀՀ ԿԳՆ Գիտապետկոմի նախագահ Սամվել Հարությունյանը «Փաստարկ» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկայացրեց կոմիտեի 2013 թվականի անելիքները: Պարոն Հարությունյանը խոսեց ՀՀ կառավարությանը ներկայացված ծրագրերից, այդ թվում նաև «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծից: Վերջինիս ընդունմամբ սահմանվելու են այնպիսի նոր հասկացություններ, որոնք նախկինում սահմանված չեն եղել: Դրանցից են՝ հետազոտական համալսարանը, ազգային գիտական լաբորատորիան, գիտական դրամաշնորհը եւ այլն: Մյուս կարեւորագույն աշխատանքը, որ պետք է իրականացվի 2013-ին, ըստ պարոն Հարությունյանի, գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրն է: Եթե մինչեւ 2008 թվականը այս ոլորտում ղեկավարի դիրքում երիտասարդները կազմում էին ընդամենը 3-4 տոկոս, ապա այժմ այդ թիվը գրեթե տասնապատկվել է: Խոսելով 2013թ. կոմիտեի ծրագրերից՝ պարոն Հարությունյանը նշեց, որ առավել մեծ թափ է ստանալու տվյալ ոլորտում մրցույթների կազմակերպումը: Նախկինում 3-4 տարին մեկ հաճախականությամբ էին կազմակերպվում գիտական մրցույթները, ապա այժմ տարեկան մեր հանրապետությունում անցկացվում են մի քանիսը՝ ներառելով նաև արտասահմանյան մրցույթները, որոնց մասնակցում են նաև հայաստանցի գիտնականները: Հետագա ծրագրերի մեջ ներառվում են նաև արտասահմանցի խորհրդատուների ընդգրկումը, եւ արդեն իսկ կոմիտեն ստացել է այդպիսի շուրջ 70 հայտ: Ըստ կոմիտեի նախագահի՝ նրանց ներգրավումը էապես կնպաստի գիտության ոլորտում եվրաինտեգրման գործընթացին: Բանախոսն անդրադարձավ նաև հանրապետությունից ուղեղների արտահոսքին՝ նշելով, որ դրա հիմնական պատճառը սոցիալական պայմանների սղությունն է. «Ցանկացած մարդ, ցանկացած գիտնական աշխատում է մի սկզբունքով՝ որտեղ հաց՝ էնտեղ կաց: Հայրենասիրությունը նույնպես որոշակի դերակատարում ունի, քանի որ ոչ բոլորն են պատրաստ աշխատել ավելի ցածր վարձատրման պայմաններում: Իսկական գիտնականի համար վաստակած գումարը կարեւոր է, բայց դա չէ նրա հիմնական նպատակը»:

Գոհար ՍՍՅԱԴՅԱՆ

## Ներկա եւ հեռանկարային ծրագրերը գիտության ոլորտում. ԳՊԿ նախագահի ասուլիսը



Մարտի 20-ին «Փաստարկ» ակումբում տեղի ունեցավ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի մամուլի ասուլիսը «Ներկա եւ հեռանկարային ծրագրեր» թեմայով, որի ժամանակ լրագրողներին ներկայացվեց տեղեկատվություն ԳՊԿ կազմակերպած մրցույթների, բնագավառի իրավական դաշտի բարելավման ուղղությամբ կատարվող աշխատանքների, ՔԵՆԴԼ նախագծի եւ կոմիտեի հեռանկարային ծրագրերի մասին:

ԳՊԿ նախագահը նշեց, որ ամփոփվել է «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2012» մրցույթը: Մրցույթի արդյունքում դրամաշնորհներ են հանձնվել 25 ասպիրանտների (25 թեմաներից 20-ն իրականացվելու է Գիտության պետական կոմիտեի, 2-ը՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, 3-ը՝ «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի ֆինանսավորմամբ): Ամփոփվել են նաեւ հայ- գերմանական համատեղ մրցույթի արդյունքները (ֆինանսավորման է երաշխավորվել 10 հայտ) եւ հայ- ռուսական համատեղ մրցույթի արդյունքները՝ հայկական կողմից: Վերջնական արդյունքները կհայտարարվեն ռուսական կողմի հետ համապատասխանեցվելուց հետո:

Հայտարարվել են գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթներ գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով: Հունվարի 22-ին հայտարարված բնական, բժշկական, գյուղատնտեսական գիտությունների ու ճարտարագիտության եւ տեխնոլոգիաների բնագավառների մրցույթի հայտերի ընդունման ժամկետն ավարտվել է, ստացվել է 354 հայտ: Փետրվարի 12-ին հայտարարված երկրորդ՝ «Հասարակական գիտություններ» եւ «Հայագիտություն եւ հումանիտար գիտություններ» բնագավառների համար մրցույթի ժամկետը կավարտվի մարտի 24-ին:

Առաջին անգամ գիտական ծրագրերի իրականացման գործընթացում հնարավորություն է ընձեռնվել ընդգրկել արտասահմանցի խորհրդատուների, եւ արդեն իսկ ստացվել է այդպիսի շուրջ 70 հայտ: Արտասահմանյան խորհրդատուների ներգրավումը գիտական ծրագրերում էապես նպաստում է գիտության ոլորտում եվրոփնտեգրման գործընթացին: Մրցութային հայտերը ներկայացվում են առցանց (online) համակարգով: Առցանց համակարգի ներդրումը մրցութային գործընթացում հնարավորություն է տալիս բոլոր փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ բացառելով ցանկացած միջամտություն, վերացնում է ավելորդ թղթաբանությունը, գործընթացը դարձնում է ավելի դյուրին եւ հեշտ կիրառելի, մոտեցնում է այն միջազգայնորեն ընդունված եւ կիրառում ստացած չափանիշներին:

Պարոն Հարությունյանը հայտնեց, որ մոտ ապագայում կոմիտեն կկազմակերպի եւս մի քանի մրցույթ՝ կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցույթ, որը կիրականացվի տնտեսության մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով, բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների հավելվածարների տրամադրման մրցույթ, գիտական սարքավորումների ձեռքբերմանն ուղղված մրցույթ, երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության մրցույթ, ինչպես նաև հայ-ռումինական եւ հայ-բելառուսական համատեղ մրցույթներ:

ԳՊԿ նախագահն անդրադարձավ նաև գիտության բնագավառի իրավական դաշտի բարելավման նպատակով կոմիտեի կատարած աշխատանքներին: Նա նշեց, որ Ազգային Ժողովում քննարկումների փուլում է «Գիտական եւ գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Օրենքի ընդունումը հնարավորություն կտա ներդնել գիտական եւ գիտատեխնիկական ծրագրերի/թեմաների ընտրության ու հաշվետվությունների գնահատման ժամանակակից եղանակ, կնպաստի գիտության եւ տեխնիկայի միջազգային մակարդակին համապատասխան, նախագծերի ընտրությանն ու արդյունավետ իրականացմանը եւ, վերջնական արդյունքում, գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը:

Կոմիտեն մշակել էլ ՀՀ կառավարություն է ներկայացրել «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվելու են մի շարք նոր հասկացություններ, ինչպիսիք են՝ հետազոտական համալսարան, ազգային գիտական լաբորատորիա, գիտական դրամաշնորհ, ֆինանսավորման ձեւերը համապատասխանեցվելու են գիտության եւ տեխնիկայի զարգացման արդի չափանիշներին, ինչպես նաև հստակեցվելու է լիազոր մարմնի իրավասությունների շրջանակը:

Մշակվել է նաև «Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրին եւ դրա իրականացման ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:


Ս. Հարությունյանը լրագրողներին հայտնեց, որ ավարտին է մոտենում ՔԵՆԴԼ նախագծի առաջին փուլը՝ AREAL-ը, որը շահագործման կհանձնվի մայիս ամսին: AREAL-ի իրականացման ընթացքում կփորձարկվեն ՔԵՆԴԼ սինքրոտրոնային լույսի աղբյուրի նախագծի հիմքում ընկած համակարգերը: AREAL նախագիծն իրականացվում է Գերմանիայի և Շվեյցարիայի արագացուցչային կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ, որոնք փորձագիտական աջակցությունից բացի պատրաստ են ինստիտուտին անհատույց տրամադրել ժամանակակից սարքավորումներ:

Անդրադառնալով Գիտության պետական կոմիտեի հեռանկարային ծրագրերին՝ Ս. Հարությունյանը նշեց, որ նախատեսվում են պայմանագրեր ՌԴ «Սկոլկովո» ինովացիոն կենտրոնի, Չինաստանի եւ Մերձավոր Արեւելքի երկրների հետ: Միջազգային համագործակցությունը նախատեսվում է զարգացնել գիտական արդյունքի առևտրայնացման ծրագրերի աջակցության ուղղությամբ: Նաև նախատեսվում է ստեղծել աշխատանքային խումբ, որը պետք է մշակի ՀՀ-ում տեխնոլոգիական հետազոտական համալսարանի ստեղծման ծրագիրը, որի իրականացումը նախատեսվում է սկսել 2014 թվականից:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի

տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

## Հայաստանում նախատեսվում է ստեղծել տեխնոլոգիական հետազոտական համալսարան



Գիտության պետական կոմիտեն այս տարի մի շարք մրցույթներ կհայտարարի: Լրագրողների հետ մարտի 20-ի հանդիպմանը ՀՀ կրթության եւ գիտության նախարարության Գիտական պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը նշեց, որ հայտարարվելու է կիրառական արդյունքների ձեռքբերմանն ուղղված մրցույթ, որը կիրականացվի տնտեսության մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով: «Կանցկացվի նաև երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության, ինչպես նաև գիտական սարքավորումների ձեռքբերմանն ուղղված մրցույթներ», - [«Արմենպրես»](#)-ի հաղորդմամբ՝ ասաց նա:

Հարությունյանն ասաց, որ նախատեսվում է ստեղծել աշխատանքային խումբ, որը պետք է մշակի ՀՀ-ում տեխնոլոգիական հետազոտական համալսարանի ստեղծման ծրագիրը, որի իրականացումը նախատեսվում է սկսել 2014 թվականից:


Անդրադառնալով նախորդ տարվա ձեռքբերումներին՝ բանախոսը նշեց, որ 2012-ը բավական հաջող տարի էր Գիտպետկոմի համար, եւ մի շարք մրցույթային ծրագրեր միտված էին երիտասարդ գիտնականներին աջակցելուն: «2012 թվականին «Ասպիրանտների հետազոտությունների աջակցություն» ծրագրի շրջանակում դրամաշնորհներ են հանձնվել 25 ասպիրանտի: Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման նպատակով հայտարարվել են գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթներ: Հունվարի 22-ին բնական, բժշկական, գյուղատնտեսական գիտությունների ճարտարագիտության եւ տեխնոլոգիաների բնագավառների գծով հայտերի ընդունման ժամկետն արդեն ավարտվել է, ստացվել է 354 հայտ: Առաջին անգամ ՀՀ-ում գիտական ծրագրերի գործընթացում հնարավորություն է ընձեռվել ընդգրկել արտասահմանցի խորհրդատուներին», - ասաց նա: Այս տարի մրցույթներին հայտերը առաջին անգամ ներկայացվում են առցանց, որը հնարավորություն է տալիս բոլոր փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ բացառելով ցանկացած միջամտություն, վերացնելով թղթաբանությունն ու ավելորդ քաշքշուկները:

Հարությունյանի խոսքով՝ Ազգային ժողովում քննարկման փուլում է «Գիտական եւ գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Օրենքի ընդունումը հնարավորություն կտա ներդնել գիտական եւ գիտատեխնիկական ծրագրերի ընտրության եւ հաշվետվությունների գնահատման ժամանակակից եղանակ: ՀՀ կառավարությանն է ներկայացվել «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվելու են մի շարք նոր հասկացություններ, ինչպիսիք են ազգային գիտական լաբորատորիա, գիտական դրամաշնորհ: Հստակեցվելու է լիազոր մարմնի իրավասությունների շրջանակը:

Ավարտին է մոտենում ՔԵՆԴԼ նախագծի առաջին փուլը՝ Areal-ը, որը շահագործման կհանձնվի մայիսին: «Ամեն տարի մրցույթների պայմանները խստացվում են՝ դրանով իսկ կանխելով զարտուղի ճանապարհներով գիտական աստիճան ստացած անձանց առկայությունը: Բարդացվել է նաև գիտության թեկնածու ստացողի կարգը: Հայաստանը որակյալ մարդկային ռեսուրսեր ունի: Պետք է ավելի շատ գիտական սարքավորումներ ձեռք բերել, որ մերոնք երկրից դուրս չգնան հետազոտությունների համար», - ասաց նա:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն ստեղծվել է ՀՀ նախագահի 2007թ.-ի հոկտեմբերի 1-ի հրամանագրով՝ որպես նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին: Գիտության պետական կոմիտեն մշակում և իրականացնում է գիտության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

## Հայաստանում այս տարի մի շարք գիտական միջազգային մրցույթներ կանցկացվեն



Հայաստանում 2013թ.-ին մի շարք գիտական միջազգային մրցույթներ կանցկացվեն, տեղեկացրեց ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«Մենք «Սկոլկովո» ռուսական հիմնադրամի հետ համագործակցության համաձայնագիր ենք ստորագրել, նախատեսում ենք հայ-ռումինական և հայ-բելառուսական գիտական, ինչպես նաև ներհանրապետական գիտական մրցույթներ անցկացնել», - չորեքշաբթի լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Հարությունյանը:

Նա տեղեկացրեց նաև, որ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն կազմակերպում է «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառներում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ, որին մասնակցելու հայտ ներկայացվում է համացանցային առցանց ռեժիմով՝ մինչև 2013 թվականի մարտի 24-ը ներառյալ:

2013թ.-ի հեռանկարային ծրագրերի թվում Հարությունյանը նաև նշեց կիրառական նախագծերի բնույթի հետազոտական նախագծերի մրցույթը, որոնց ֆինանսավորումը կանցկացվի մասնավոր հատվածների հետ համաֆինանսավորման սկզբունքով, ինչպես նաև ասպիրանտների հետազոտությունների աջակցությանն ուղղված մրցույթը:

Խոսելով 2012թ.-ի մրցութային ծրագրերի արդյունքների ամփոփման մասին՝ Հարությունյանը նկատեց, որ 25 ասպիրանտներ ֆինանսավորում են ստացել «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր-2012»-ի շրջանակներում, 10 հայտեր հայ-գերմանական համատեղ մրցութի շրջանակներում ֆինանսավորման երաշխիք են ստացել:

Հարությունյանն ընդգծեց, որ չնայած առկա խնդիրներին՝ Հայաստանի գիտական ոլորտը շատ է առաջ ընթացել, և աշխարհում աճել է հայ գիտնականների և փորձագետների նկատմամբ վստահությունը:

**Հետազոտական համալսարան, ազգային գիտական լաբորատորիա, գիտական դրամաշնորհ**



ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկայացրեց կոմիտեի 2013 թվականի անելիքները, խոսել կառավարությանը ներկայացված ծրագրերի, այդ թվում նաև «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին:

Հետազոտական համալսարան, ազգային գիտական լաբորատորիա, գիտական դրամաշնորհ. սրանք նոր հասկացություններ են, որոնք պետք է ներդրվեն հայաստանյան գիտության մեջ՝ հավակնելով նոր շունչ տալ Հայաստանի դեպքում ծերացող եւ տարբեր գնահատումներով՝ պատշաճ գնահատման չարժանացող ոլորտում: 2013-ին Գիտության պետական կոմիտեի կողմից իրականացվելիք կարելորագույն աշխատանքը, ըստ կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի, գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրն է: Նրա վկայակոչած թվերը փաստում են՝ եթե մինչև 2008 թվականը այս ոլորտում ղեկավար դիրքում երիտասարդները կազմում էին ընդամենը 3-4 տոկոս, ապա այժմ այդ թիվը գրեթե տասնապատկվել է:

Կրթության եւ գիտության նախարարությունը վերջին տարիներին արդեն իսկ փորձեր է անում վերացնել ուսումնական համակարգում առաջացած խառնաշփոթը, երբ բազմաթիվ ուսումնական հաստատություններ էին բացվել զուտ կոմերցիոն նպատակներով եւ երբ մոռացության էր մատնվել դրանց իրական՝ կրթական առաքելությունը:

Գիտության ոլորտում առավել մրցունակ կադրերին նոր հնարավորություններ կընձեռեն առավել հաճախ կազմակերպվելիք մրցույթները: Նախկինում 3-4 տարին մեկ էին կազմակերպվում գիտական մրցույթներ: Այժմ տարեկան անցկացվում է մի քանիսը՝ ներառելով նաև արտասահմանյան մրցույթներ:

Գիտության պետական կոմիտեի նախագահն անդրադարձավ նաև հանրապետությունից ուղեղների արտահոսքին՝ կիսելով դիտարկումները, որ դրա հիմնական պատճառը սոցիալական պայմաններն են:

Ցանկացած մարդ, ցանկացած գիտնական, ըստ նրա, աշխատում է մի սկզբունքով՝ «Որտեղ հաց, էնտեղ կաց»: Ամեն դեպքում՝ Սամվել Հարությունյանը շարունակում է մնալ այն համոզմանը, որ իսկական գիտնականի համար վաստակած գումարը կարելու է, բայց դա չէ նրա հիմնական նպատակը:

**Լիանա Եղիազարյան**